

Նայասրանի Նանրապետության
հանրային ծառայությունները
կարգավորող հանձնաժողով

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

«ՆայՌուսգազարդ» ՓԲԸ-ի կողմից
հանձնաժողով ներկայացվող սպառողների սպասարկման որակի
վերաբերյալ տեղեկատվության հավաստիության
ուսումնասիրության

Երևան
2009
Մարտ

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

«ՆայՌուսգազարդ» ՓԲԸ-ի կողմից սպառողների սպասարկման որակի վերաբերյալ հանձնաժողով ներկայացվող տեղեկատվության հավաստիության ուսումնասիրության

Նայասպանի Նանրապեության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2009 թվականի փարեկան աշխատանքային ծրագրի 11-րդ կետի համաձայն՝ սույն թվականի մարտ ամսին իրականացվել է սպառողների սպասարկման որակի վերաբերյալ «ՆայՌուսգազարդ» ՓԲԸ-ի կողմից հանձնաժողով ներկայացվող տեղեկատվության հավաստիության ուսումնասիրություն: Ուսումնասիրության ծրագիրը:

Նայասպանի Նանրապեության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը 2006 թվականի մայիսի 31-ի №91Ա և 2007 թվականի մայիսի 11-ի 215Ա որոշումներով հաստատել են սպառողների սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվության հետևյալ օրինակելի ձևերը.

1. «Տեղեկատվություն ստացված դիմում-բողոքների բնույթի և դրանց արձանագանքման վերաբերյալ»
2. «Տեղեկատվություն հեռախոսազանգերի գրանցման վերաբերյալ»,
3. «Տեղեկատվություն սպառողների գազամարակարարման ընդամենը դեպքերի վերաբերյալ»,
4. «Տեղեկատվություն մարակարարված գազի ջերմատվության միջին ցուցանիշների վերաբերյալ»:

Ուսումնասիրություններ իրականացվել են «ՆայՌուսգազարդ» ՓԲԸ-ի գլխավոր գրասենյակում ինչպես նաև «ՆայՌուսգազարդ» ՓԲԸ-ի Աբովյան, Էջմիածին, Շիրակ, Սևան և Գավառ մասնաճյուղերում:

Ուսումնասիրության ծրագրում ներառվել են հետևյալ հարցերը.

1. «ՆայՌուսգազարդ» ՓԲԸ-ի կողմից հանձնաժողով ներկայացվող սպառողների սպասարկման որակի վերաբերյալ տեղեկատվության համար պարասխանատուների հրամանների առկայությունը:

2. Ընկերության ստորաբաժանումներում կիրառվող գրանցամատյանների նույնատիպությունը, դրանցում գրառումների լիարժեքությունը և սպառողների կողմից բարձրացրած հարցերի վերաբերյալ տվյալների առկայությունը:
3. Բնական գազի որակական ցուցանիշների որոշման ընթացակարգի առկայությունը և դրանց կիրառումը:

4. 2008 թվականի 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակների հանձնաժողով ներկայացված տեղեկատվության համապատասխանությունը մատյանների գրառումների հետ:

Մասնաճյուղերում ուսումնասիրությունները սկսելուց առաջ համեմարվել են «ՆայՌուսգազարդ» ՓԲԸ-ի կողմից հանձնաժողով ներկայացված և մասնաճյուղերից «ՆայՌուսգազարդ» ՓԲԸ ներկայացված տեղեկատվությունները բաժանորդների հեռախոսազանգերի, դիմում-բողոքների և գազամատակարարման ընդհատումների վերաբերյալ:

«ՆայՌուսգազարդ» ՓԲԸ-ի գլխավոր գրասենյակում մասնաճյուղերից ստացված տեղեկատվության ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է.

1. 2008 թվականի 4-րդ եռամսյակին, ըստ «ՆայՌուսգազարդ» ՓԲԸ-ի ներկայացրած տեղեկատվության՝ հեռախոսազանգերի ընդհանուր քանակը կազմել է 6105, իսկ ըստ ԳԳՄ-ի՝ 5451, տեղեկատվության հավաստիությունը կազմում է 89.3%: 2008 թվականի 2-րդ եռամսյակին, ըստ «ՆայՌուսգազարդ» ՓԲԸ-ի հեռախոսազանգերի ընդհանուր քանակը կազմել է՝ 2398, իսկ ըստ ԳԳՄ-ի 3482, տեղեկատվության հավաստիությունը կազմում է 68.9%:
2. 2008 թվականի 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներին մասնաճյուղերից «ՆայՌուսգազարդ» ՓԲԸ հաղորդված դիմում-բողոքների ընդհանուր քանակի վերաբերյալ տեղեկատվությունը համընկնում էր հանձնաժողով ներկայացվածի հետ՝ հավաստիությունը կազմում է 100%:
3. 2008 թվականի 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներին գազամատակարարման ընդհատումների քանակի վերաբերյալ տեղեկատվությունը համընկնում էր հանձնաժողով ներկայացվածի հետ՝ հավաստիությունը կազմում է 100%:

Մասնաճյուղերում գրանցամատյաններում կատարված գրառումների ուսումնասիրության ընթացքում պարզվել է՝

ա) Արբյան մասնաճյուղում բաժանորդների կողմից ներկայացված դիմում-բողոքների ընդունման և գրանցման պատասխանատու նշանակվել է մասնաճյուղի անվտանգության գծով փոխսրբերը 2008թ-ի հունիսի 16-ի N03ընդ հրամանով:

Նեռախոսազանգերը գրանցվում են միայն 1-04 վթարային ծառայության հեռախոսազանգերի գրանցամատյանում: Եռամսյակի վերջում այդ գրանցամատյանից դուրս են գրվում և դասակարգվում են ոչ վթարային հեռախոսազանգերը, որոնք հաղորդվում են «ՆայՌուսգազարդ» ՓԲԸ: Տեղեկատվության մեջ չի ներառվում ներտնային սպասարկման վերաբերյալ և արագ արձագանքման հեռախոսահամարներով արված հեռախոսազանգերը:

Դիմում-բողոքներ գրանցելու գրանցամատյանը «ՆայՌուսգազարդ» ՓԲԸ-ի կողմից սահմանված ձևի է և գրնվում է մասնաճյուղի փնթեկի ընդունարանում գործավարի մոտ: Գրանցամատյանում 2008թ-ի 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներում գրանցված դիմում-բողոքներ չկային, հետևաբար՝ չեն ներկայացվել ինչպես «ՆայՌուսգազարդ» ՓԲԸ, այնպես էլ հանձնաժողով: Ընտրանքային ուսումնասիրությունը ցույց տվեց, որ մասնաճյուղի ընդհանուր գրագրության գրանցամատյանում դիմում-բողոքների գրանցումները նույնպես բացակայում են:

Մասնաճյուղում ընդհատումների վերաբերյալ տեղեկատվությունը ձևավորվում է «ՆայՌուսգազարդ» ՓԲԸ-ին հաղորդված հեռախոսագրերի հիման վրա, որոնցում նշվում է ընդհատման պատճառը (պլանային կամ վթարային աշխատանքների համար), ընդհատման օրը, ընդհատման սկիզբը և ավարտը (ըստ ժամերի), ինչպես նաև ըստ մասնաճյուղում եղած տեղեկատվության գազագրկվող գազատարին միացված՝ գազագրկվող բաժանորդների քանակը: Այս հեռախոսագրերը եռամսյակների վերջում հիմք են հանդիսանում բնական գազի ընդհատման վերաբերյալ «ՆայՌուսգազարդ» ՓԲԸ տեղեկատվության ներկայացման համար: Նեռախոսագրերը պահվում են առանձին թղթապանակում, հետևաբար փաստենք, որ ձևավորվում է գազագրկման պլանային այլ ոչ թե փաստացի տնտեսության վերաբերյալ տեղեկատվություն:

բ) Սևան մասնաճյուղում փաստաթղթերի կատարման ընթացքի և ժամկետի վերահսկողության պարասխանապու 2009 թվականի հունվարի 12-ից N3/S հրամանով նշանակվել է մասնաճյուղի փնթեկի ընդհանուր հարցերով տեղակալը:

Այս մասնաճյուղում նույնպես հեռախոսազանգերը գրանցվում են միայն 1-04 վթարային ծառայության հեռախոսազանգերի գրանցամատյանում: Եռամսյակի վերջում այդ գրանցամատյանից դուրս են գրվում և դասակարգվում են ոչ վթարային հեռախոսազանգերը, որոնք հաղորդվում են «ՆայՌուսգազարդ» ՓԲԸ: Տեղեկատվության մեջ չի ներառվում ներտնային սպասարկման վերաբերյալ և արագ արձագանքման հեռախոսահամարներով արված հեռախոսազանգերը:

Դիմում-բողոքներ գրանցելու գրանցամատյանը «ՆայՌուսգազարդ» ՓԲԸ-ի կողմից սահմանված ձևի է և գրնվում է մասնաճյուղի փնթեկի ընդունարանում՝ գործավարի

մուր: 2008թ-ի 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներին դիմում-բողոքների գրանցամատյանում դիմում-բողոքների վերաբերյալ գրառումներ չկային: Ըստ հանձնաժողով ներկայացված տեղեկատվության՝ 2008թ-ի 2-րդ և 4-րդ եռամսյակներին դիմում-բողոքներ չեն եղել, իսկ 3-րդ եռամսյակին մասնաճյուղ ներկայացվել է 1 դիմում-բողոք, ինչն էլ ներկայացվել է հաշվետվություններով:

Մասնաճյուղում ընդհատումների վերաբերյալ տեղեկատվությունը ձևավորվում է «ՆայՌուսգազարդ» ՓԲԸ-ին հաղորդված հեռախոսագրերով, ինչպես Աբովյան մասնաճյուղում, հերևաբար ձևավորվում է գազագրկման պլանային, այլ ոչ թո փաստացի տնտեսության վերաբերյալ տեղեկատվություն: Ընտրանքային կարգով համեմատություն է իրականացվել տեղական հեռուստատեսությամբ արված մի քանի հայտարարությունների և գրանցված ընդհատումների ժամկետների միջև, որոնք համընկնում էին հաղորդված տեղեկատվության հետ:

գ) Շիրակ մասնաճյուղում ՆՏ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 11.05.2007թ. N215-Ա որոշման պահանջների կարարման և հաշվետվությունների ժամանակին ներկայացման պատասխանատու 2008 թվականի հուլիսի 7-ի N20 հրամանով նշանակվել է մասնաճյուղի ՇՏԲ-ի պետը:

Արագ արձագանքման հեռախոսագանգերը գրանցելու գործառույթը վերապահված է Ախուրյան տեղամասում՝ գործավարուհուն, Արթիկ և Մարալիկ տեղամասերում՝ գործավար-օպերատորին, որոնց մուր և գտնվում են հեռախոսագանգերի գրանցամատյանները: Առանձին գործում է նաև 1-04 վթարային հեռախոսագիծ, վթարային հեռախոսագանգերը գրանցվում են առանձին գրանցամատյանում և չեն ներառվում ներկայացված տեղեկատվության մեջ: Եռամսյակի վերջում հեռախոսագանգերի վերաբերյալ տեղեկատվությունը հավաքվում է մասնաճյուղում, որտեղից և ներկայացվում է «ՆայՌուսգազարդ» ՓԲԸ: Տեղեկատվության մեջ չի ներառվում ներտնային սպասարկման վերաբերյալ հեռախոսագանգերը:

Ուսումնասիրության ընթացքում համեմատվել են 2008թ-ի 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներում «ՆայՌուսգազարդ» ՓԲԸ հաղորդված հեռախոսագանգերի քանակը գրանցամատյաններում գրանցվածների հետ: Քանակները չէին համընկնում՝ 2008 թվականի 2-րդ եռամսյակում փաստացի գրանցվել է 12 հեռախոսագանգ, «ՆայՌուսգազարդ» ՓԲԸ ներկայացվել 16 հեռախոսագանգ, 2008 թվականի 3-րդ եռամսյակում փաստացի գրանցվել է 14 հեռախոսագանգ, «ՆայՌուսգազարդ» ՓԲԸ ներկայացվել 19 հեռախոսագանգ և 2008 թվականի 4-րդ եռամսյակում փաստացի գրանցվել է 16 հեռախոսագանգ, «ՆայՌուսգազարդ» ՓԲԸ ներկայացվել 18 հեռախոսագանգ:

Դիմում-բողոքներ գրանցելու գրանցամատյանը համապատասխանում էր «ՆայՌուսգազարդ» ՓԲԸ-ի կողմից սահմանված ձևին և գտնվում մասնաճյուղի փնօրենի ընդունարարանում գործավարի մոտ: 2008թ-ի 2-րդ և 3-րդ եռամսյակների ընթացքում դիմում-բողոքներ գրանցված չէին, իսկ 4-րդ եռամսյակում գրանցված էր 2 դիմում բողոք, որի հեղինակը միևնույն բաժանորդն էր: Դիմում-բողոքը պատասխանվել էր սահմանված ժամկետում ՆՄ01-17/106 գրությամբ, ինչն էլ ներկայացվել է հաշվեպվություններով:

Մասնաճյուղում ընդհատումների վերաբերյալ փեղեկապվությունը ձևավորվում է «ՆայՌուսգազարդ» ՓԲԸ-ին հաղորդված հեռախոսագրերով, ինչպես մյուս մասնաճյուղերում: Ընտրանքային կարգով համեմատություն է իրականացվել փեղական հեռուստատեսությամբ արված մի քանի հայտարարությունների և գրանցված ընդհատումների ժամկետների միջև, որոնք համընկնում էին հաղորդված փեղեկապվության հետ:

դ) Էջմիածին մասնաճյուղում ՆՆ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 11.05.2007թ. N215-Ա որոշման պահանջների կատարմանը և հաշվեպվությունների ժամանակին ներկայացման պատասխանապատճի փնօրենի բանավոր կարգադրությամբ նշանակված էր մասնաճյուղի գլխավոր ճարտարագետի պաշտոնակատարը (ուսումնասիրվող 2008թ-ի 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներին գործող պատասխանապատճի ազարված էր աշխատանքից):

Մասնաճյուղում բաժանորդների սպասարկումը իրականացնելու նպատակով առանձին կառուցվել և կահավորվել է սպառողների սպասարկման կենտրոն, որը պարզեցնում և հեշտացնում է բաժանորդների սպասարկումը: Գրանցվում են միայն 1-04 ծառայության հեռախոսազանգերը:

Դիմում-բողոքներ գրանցելու գրանցամատյանը գտնվում էր սպասարկման կենտրոնում և չէր համապատասխանում «ՆայՌուսգազարդ» ՓԲԸ-ի կողմից սահմանված ձևին, որում գրառումներ չէին արված:

Մասնաճյուղում ընդհատումների վերաբերյալ փեղեկապվությունը ձևավորվում է ինչպես վերը նշված մասնաճյուղերում:

ե) Գավառ մասնաճյուղում գրավոր և բանավոր բողոքների, առաջարկությունների գրանցամատյանում գրանցվող դիմումների գործընթացի համար պատասխանապատճի 2008 թվականի հուլիսի 3-ի N77 հրամանով նշանակվել է մասնաճյուղի կադրերի և հատուկ աշխատանքների գծով ավագ փեսուզը:

Նեռախոսազանգերը գրանցվում են միայն 1-04 վթարային ծառայության հեռախոսազանգերի գրանցամատյանում: Եռամսյակի վերջում այդ գրանցամատյանից դուրս են գրվում, բոլոր հեռախոսազանգերը և հաղորդվում «ՆայՌուսգազարդ» ՓԲԸ:

Դիմում-բողոքներ գրանցելու գրանցամատյանը «ՆայՌուսգազարդ» ՓԲԸ-ի կողմից սահմանված ձևի է և գրվում է մասնաճյուղի տնօրենի ընդունարանում գործավարի մոտ: Գրանցամատյանում 2008թ-ի 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներում գրանցված դիմում-բողոքներ չկան: Որը համապատասխանում է մասնաճյուղից «ՆայՌուսգազարդ» ՓԲԸ հաղորդած տեղեկատվությանը: Ընտրանքային ուսումնասիրությունը ցույց տվեց, որ մասնաճյուղի ընդհանուր գրագրության գրանցամատյանում դիմում-բողոքներ գրանցված չէին:

Մասնաճյուղում ընդհատումների վերաբերյալ տեղեկատվությունը ձևավորվում է տնօրենին ներկայացվող զեկուցագրերով, որտեղ նշվում է ընդհատման պատճառը (պլանային կամ վթարային աշխատանքների համար), ընդհատման օրը, ընդհատման սկիզբը և ավարտը (ըստ ժամերի): Զեկուցագրերը պահվում են առանձին թղթապանակում և գրանցվում գրանցամատյանում ըստ տևողության և բնույթների, ինչպես նաև գազագրկվող բաժանորդների քանակը, որը և հիմք է հանդիսանում եռամսյակների վերջում բնական գազի ընդհատման վերաբերյալ տեղեկատվությունը «ՆայՌուսգազարդ» ՓԲԸ ներկայացման համար: Ընտրանքային կարգով համեմատություն է իրականացվել տեղական հեռուստատեսությամբ արված մի քանի հայտարարությունների և գրանցված ընդհատումների ժամկետների միջև, որոնք համապատասխանում էին:

Բնական գազի որակական ցուցանիշների որոշման ընթացակարգի վերաբերյալ պարզվել է՝

Բնական գազի որակական ցուցանիշները որոշող լաբորատորիան հավաստագրված է (վկայականի կրկնօրինակը կցվում է) և հանդիսանում է «ՆայՌուսգազարդ» ՓԲԸ-ի «Ինժեներական կենտրոն» մասնաճյուղի ստորաբաժանումը: Լաբորատորիան գործում է մասնաճյուղի կողմից հաստատված կանոնակարգի համաձայն (կանոնակարգը կցվում է): Բնական գազի նմուշառումը կատարվում է շաբաթվա ընթացքում 2 անգամ (նշենք, որ ըստ «ՆայՌուսգազարդ» ՓԲԸ-ի և «Գազառոմ Էկսպորտ» ՍՊԸ-ի միջև կնքված N 2102-08-22 պայմանագրի գազի որակական ցուցանիշները որոշվում է շաբաթը մեկ անգամ): Փորձարկումը (ուսումնասիրություն) կատարվում է լաբորատորիայում միջազգային կազմակերպության ԳՈՍՏ -22667-82 և միջազգային ԻՍՈ-6976-ի համաձայն: Փորձարկման արդյունքում կազմվում է արձանագրություն գազի բաղադրության և ֆիզիկաքիմիական ցուցանիշների

մասին: (արձանագրության օրինակը կցվում է) Արձանագրությունները համարակալվում և պահվում են առանձին թղթապանակում: Ստացված ցուցանիշներից կալորիականությունը միջինացվում է ըստ փաստյակների, հրապարակվում ՋԼՄ-ով և սահմանված ձևով ներկայացվում հաճնաժողով: Ներկայացված տեղեկատվությունը հավասարի է:

Եզրակացություն

Սպառողների սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ հանձնաժողով ներկայացվող տեղեկատվության հավասարիության ուսումնասիրության արդյունքում աշխատանքային խմբի կողմից արձանագրվել է, որ «ՆայՌ-ուսգագարդ» ՓԲԸ-ում.

1. Սպառողների սպասարկման որակի վերաբերյալ ՆՏ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացվող տեղեկատվության մշակման և ներկայացման համար բոլոր մասնաճյուղերի ղեկավարների հրամանով նշանակված են պատասխանատուներ: Սակայն վերջիններս չեն հրահանգավորվել իրենց վերապահված պարտականությունների ողջ ծավալով կատարման վերաբերյալ:

2. Նայասրանի Նանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2008 թվականի մայիսին, սպառողների սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ հանձնաժողով ներկայացվող տեղեկատվության հավասարիության ուսումնասիրության արդյունքում աշխատանքային խմբի կողմից առաջարկվել էր սահմանել գրանցամատյանների միասնական ձևեր, սակայն ուսումնասիրության ընթացքում պարզվեց, որ սահմանված է միայն դիմում-բողոքների գրանցման համար գրանցամատյանների միասնական ձև: Դիտարկված հինգ մասնաճյուղերից մեկում (Էջմիածին մասնաճյուղում) գրանցամատյանը չէր համապատասխանում սահմանված ձևին, ինն ամսվա ընթացքում (2008 թվականի 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներում) գրացվել է ընդամենը 3 դիմում-բողոք: Այս հանգամանքը խիստ մտահոգիչ է, քանի որ միայն ՆՏ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով այդ նույն ժամանակահատվածում ստացվել է 211 բանավոր և գրավոր դիմում-բողոք, միևնույն ժամանակ Տավուշ մասնաճյուղը 3-րդ եռամսյակում դիմում-բողոքների մասին տեղեկատվության մեջ ներառել է 76 նոր միացման վերաբերյալ դիմում՝ որպես բողոք: Ներկայացված, կարելի է եզրակացնել, որ բողոքների բացակայությունը ոչ պարզաճ հրահանգավորման հետևանք է:

3. Դիտարկված մասնաճյուղերում (բացի Շիրակ մասնաճյուղից) հեռախոսազանգերի գրանցման մաքյաններ չեն ներդրվել և հետևաբար հեռախոսազանգեր չեն գրանցվում:

Էջմիածին մասնաճյուղում որպես տեղեկատվություն ամիսներ շարունակ ներկայացվում է հեռախոսազանգերի «0» քանակ:

Արուսյան և Սևան մասնաճյուղերից ներկայացվել է «ՆայՌուսգագարդ» ՓԲԸ 1-04 ծառայության գրանցամաքյանից դուրս բերված «ոչ վթարային» հեռախոսազանգերի քանակը: Գավառ մասնաճյուղը ներկայացնում է 1-04 հեռախոսահամարով հեռախոսազանգերը ամբողջությամբ:

Ուսումնասիրված մասնաճյուղերում չեն հաշվառվում ներմուծային սպասարկման վերաբերյալ հեռախոսազանգերը:

4. Մասնաճյուղերի համար գազամաքակարարման ընդհատումների հաշվառման գրանցամաքյանի նույնանման ձև սահմանված չի: Նաշվառումը իրականացվում է հեռախոսագրերի և մեկ մասնաճյուղում գեկուցագրերի (Գավառ մասնաճյուղում) միջոցով: Ներկայացված ընդհատումների քանակը և տևողությունը համապարասխանում է «ՆայՌուսգագարդ» ՓԲԸ և հանձնաժողով ներկայացված տեղեկատվությանը: Միաժամանակ հարկ է նշել, որ գրանցամաքյանի բացակայությունը հնարավորություն չի տալիս հավաստի տեղեկատվություն ստանալ փաստացի գազամաքակարարման դադարեցման և վերականգնման ժամկետների վերաբերյալ:

Առաջարկություններ

Նաշվի առնելով ուսումնասիրության արդյունքները, աշխատանքային խումբն առաջարկում է.

1. Սահմանել և ներդնել հեռախոսազանգերի և ընդհատումների վերաբերյալ տվյալների գրանցման միասնական գրանցամաքյաններ:

Նեռախոսազանգերի վերաբերյալ ստացված տեղեկատվությունը պետք է ներառի, ինչպես սահմանված նմուշի մաքյանում արագ արձագանքման հեռախոսահամարներով կաքարվող զանգերը, այնպես և ներմուծային սպասարկման ու 1-04 հեռախոսազանգերի մաքյանից դուրս գրված ոչ վթարային հեռախոսազանգերը:

Ընդհատումների վերաբերյալ սրացված տեղեկատվությունը պետք է ներառի գազամատակարարման ընդհատումների և վերականգնման իրական ժամկետները:

2. Անցկացնել մասնաճյուղերում պատասխանատուների հրահանգավորում՝ ներդրվող սպառողների սպասարկման որակի գրանցամատյաններում գրանցվող տեղեկատվության նույնանման գրանցման, դասակարգման և հավաստիության վերաբերյալ:

3. Ընկերության կողմից սահմանել պարբերական վերահսկողություն մասնաճյուղերում գրանցամատյաններում կատարվող գրառումների բովանդակության դասակարգման և հավաստիության նկատմամբ:

4. Դիտարկել Էջմիածին մասնաճյուղում բաժանորդների սպասարկման կենտրոն կազմակերպման փորձը այլ մասնաճյուղերում կիրառելու հնարավորությունը:

26.03.2009 թ.